

գոր Կեսարացւոյ միջեւ : Կեսարացին , որ Մովսիսի «Տողեւոր հայրն» էր , ոգևով չափ հակառակ էր «Փռանկներուն» , որոնց հետ միութեան կը ձգտէր Զաքարիա : Թէ ի՞նչ ընթացք բռնեց Մովսէս այս վէճերու հանդէպ , չգիտենք : Բայց կը տեսնենք իր հայրենիք վերադարձէն ետքը , որ իր տեսութիւնները բազմօք կը խոտորէին Կեսարացւոյ տեսակէտներէն : Անիկա կ'ապրէր թէ Նախիջևեանի կաթողիկէ Արքեպիսկոպոսին հետ եւ թէ Սպահանի Կարմեղեանց հետ բարեկամական , նոյն իսկ սիրտ մտերմական յարաբերութեան մէջ :

Իւր տեսակէտները եկեղեցիներու յարաբերութեանց մասին գեղեցիկ զծած է Մովսէս 1632 , Օգոստոս 30ին առ Վլատիսլաւ Լեհաց թագաւորն գրած թղթին մէջ , ուսկից կարեւոր կը համարիմ յառաջ բերել հետեւեալ տողերը .

«Եղիցի սէր եւ խաղաղութիւն ի միջի մերում . քանզի Աստուած սէր է . եւ որ կայ ի սէրն՝ բնակի յԱստուած եւ Աստուած ի նմա , . քանզի կան բազումք , որք ոչ են տեղեակ սրոյս այս . հակայ բանիւք վիճին ընդ միմեանս՝ ստելով . Ես Պօղոսեան եմ եւ ես Ապօղոսեան եմ . եւ միւսն թէ ես Կեփայեան , : Իսկ մեք զպատուէր սրբոյն Պօղոսի լսել հայցեմք ի ձէնջ . Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք , զՔրիստոս զգեցեալ էք . չիք խտիր ո՛չ հրէի եւ ոչ հեթանոսի , ոչ ծառայի եւ ոչ ազատի , ոչ արուի եւ ոչ իգի . զի ամենեքեան զուք մի էք ի Քրիստոս Յիսուս , : Քանզի եւ ի